



Saints Joachim & Anne
Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ
ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor
Rev. Fr. DIRAN PAPA ZIAN, Archpriest
Տ. ՏԻՐԱՆ ԱՌ. ԷԶՆՅ. ՓԱՓԱԳԵԱՆ, ՀՈՎԻԼ

22 Հոկտեմբեր, 1992

Գեր. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Առաջնորդ
Առաջնորդարան Հայոց որ ի նիւ Եորք, Ն.Ն.,

Սիրելի Սրբազան,

Նախ եւ առաջ կ'ողբեմ շնորհաւորել ձեզ սրտանց՝ ձեր Արքուէթեան տիտղոսին պատիւին համար որ արժանի վարձատրուեիլն մըն է՝ ազգիս հայրախնամ վեհափառ Հայրապետին կողմէ, ձեր տարած անխոնջ ջանքերուն եւ արդիւնաւոր գործունէ- ութեան համար, առաւել ջլատինդ աշխատանք պահանջող ճակատագրական այս օրե- րուն, երբ ազգովին դժնդակ օրեր կը դիմէիւնք: Տար Աստուած որ աւելի պայ- ծառ օրերու արժանանանք ի Մայր Հայրենիք եւ ի Սփիւռս աշխարհի:

Ապա կ'ողբեմ արագ նօթով մը վերատեսուեթեան ենթարկել՝ եկեղեցւոյս նորա- շէն Ս. խորանի օժման համար ձեզի առաջարկած թուականս՝ իմ 8 Հոկտ. 92 թուա- գրրեալ նամակովս: որով խնդրած էի որ Յունիս 6, 1993 թուականը մեզի վերա- պահէք: Այսու կ'նձապարեմ այդ թուականը փոխել՝ աւելի յարմար թուական մը առաջարկելով. եթէ անշուշտ ձեր ժամանակացոյցին կը յարմարի. ըստ այսմ ու- րեմըն՝ շատ լաւ պիտի ըլլար եթէ մեզի յատկացնէիք Զատկի յաջորդող Կիրակին՝ Ապրիլ 18, 1993: Եթէ ուրեմն կարելիութիւն մը կայ՝ հաճեցէք մեզի վերապա- հել այդ թուականը՝ ԱՊՐԻԼ, 18, 1993 եւ չեղեալ համարել նախորդիւ առաջար- կըլած թուականը: Յուսով եմ որ ձեր ժամանակացոյցը պիտի ներէ որ այս նոր թուականը տրուի մեզի եւ դուք ալ ի վիճակի կ'ըլլաք ի մօտոյ տեղեակ պահել մեզի, որպէս զի մենք ալ մեր կարգին վստահ ըլլալով՝ միանգամ ընդ միշտ՝ ճըշ- դենք թուականը:

Շնորհակալութիւն ձեր ուշադրութեան համար:

Յ.Գ. - Եթէ պարտաւոր եմ ձեզ առաջարկած թուականը անպարտաւոր ե- ջիլի, պէ՛տք է պարտաւորեալ աւելացը իրաւաբէ հարկոցի վերահսակումը, յաւանքով որ իր յարմարի ձեր ժամանակացոյցի:

Խոնարհարար,
Աղօթակիր
Տ. Տիրան Ա.Բ.Բ.Յ. Փափագեան,
Հովիւ